

Ս. Բ. Հարությունյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԿԱՊԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԺԱՆՐԵՐԻ ՀԵՏ

Հանելուկները մի շարք ընդհանուր գծեր ունեն բանահյուսական մյուս ժանրերի հետ։ Այդ ընդհանրությունները գալիս են մի կողմից ապացուցելու արվեստի նախնական սինկրետիկ վիճակի վերապրուկների առկայությունը, մյուս կողմից իրենց բնապատմական կյանքով զարգացող բանահյուսական առանձին ժանրերի ու տեսակների իրար նկատմամբ ունեցած փոխադարձ ազդեցության ու ներգործության հարատևությունը։ Երկու դեպքում էլ գործ ունենք ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործությունների միմյանց հանդեպ ունեցած սերտ կապի ու փոխհարաբերության հետ։

Լինելով էպիկական ժանրի ստեղծագործություններ, հանելուկները ամենից առաջ պիտք է առնչվեն այդ ժանրին պատկանող բանահյուսական մնացած տեսակներին։ Քննությունը ցույց է տալիս, որ հանելուկները կապվում են հեքիաթների, Նառած-ասացվածքների և ժողովրդական աղոթքների հետ։ Ըստ որում վիպական բանահյուսության հիշյալ տեսակների նկատմամբ հանելուկների կապը ոչ միայն ձևական, արտահայտչական բնույթ ունի, այլ ներքին կառուցվածքային, որ պայմանավորված է ժանրային ընդհանրություններով։

Հայ ժողովրդական հեքիաթների նկատմամբ հանելուկների ունեցած աղերսը դրսևորման յուրօրինակ ձևեր ունի։

Ամենից առաջ հեքիաթներում հանելուկայինը դրսևորված է իրրև սյուժետի կառուցվածքային առանձնահատկություն։ Նման հեքիաթների սյուժեն կառուցված է հանելուկային իրադրությունների վրա։ Հեքիաթային հանգույցը սկսվում է հանելուկային որևէ վիճակով կամ հարցադրմամբ։ Դրանք դառնում են ծավալվող դեպքերի այն ծայրակետերը, որոնցից սկիզբ է առնում սյուժետային կենտրոնական գիծը, որի զարգացման յուրաքանչյուր աստիճանը իրականանում է առանձին հանելուկային միջադեպերի ստեղծմամբ ու լուծմամբ։ Այդ միջադեպերը, զարգացնելով սյուժետային գիծը, հեքիաթի վերջում հասցրնում են նրա հանդույալուծմանը, որը և դառնում է հանելուկային իրադրության լուծումը։

Այս կարգի հեքիաթները կանխված են հեքիաթ-հանելուկներ։

Ձևերի տակ եղած հայկական հեքիաթների տպագիր նմուշների մեջ հանդիպում են մեկ տասնյակի չափ հեքիաթ-հանելուկներ։

Տեսնենք դրանցից մի քանիսը։

Սրվանձտյանի հրատարակած «Երազատեսը»¹ հեքիաթ-հանելուկ է, որի

¹ «Մանան», ժողովրդաց և ի լույս էած Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1876, էջ 190։

մի ուրիշ փոփոխական է Տ. Նավասարդյանի «էրազ տենող աշկերտը»²։ Հեքիաթի հերոսը՝ մինուճար պատանին (ոսկերչի որս աշակերտը) հայտնում է իր հարազատներին, ամիրային (թագավորին), որ ինքը երազ է տեսել, բայց ոչ մեկին չի պատմում իր տեսածը։ Ահա այս հանելուկային իրադրությունը դառնում է հեքիաթի հանգույցը, որից սկսում են ծավալվել դեպքերը։ Դեպքերի հետագա ընթացքը զարգանում է հանելուկային հարցերի և դրանց լուծման հետ կապված միջադեպերի ծավալման շնորհիվ։

Արևմուտքի (Ֆրանգստանի) թագավորը ամիրային պատգամավորների միջոցով երեք դժվարալուծելի հանելուկային հարցումներ է ուղղում, պայմանով. «Թէ հանիք՝ հանիք. թէ՛ չէ՛՝ ձեր աղջիկը տը տանիմ»³։

«Զիմացա ր, իմաց կաց քու սաղ թագավորութիւնը քարուքանդ կանեմ»⁴։ Տղան, որին ամիրան հորն էր գցել, լուծում է այդ հանելուկային հարցումները, արժանանալով ամիրայի (թագավորի) հիացմունքին։ Պատանուն հանում են հորից և ուղարկում Արևմուտքի (Ֆրանգստանի) թագավորի աղջկան ուղևուր։ Տղան ճանապարհին օգնականներ է ձեռք բերում, որոնց շնորհիվ իրագործում է Արևմուտքի թագավորի առաջադրած պայմանները և Պրա սղջկան վերցնում է կնության։ Ըստ Նավասարդյանի փոփոխակի՝ ոսկերչի, աշակերտը, լուծելով հանելուկները, ամուսնանում է թագավորի իմաստուն դստեր հետ։ Ֆրանգստանի թագավորն, իմանալով տղայի իմաստությունը, հրավիրում է նրան իր մոտ և մի հանելուկային անլուծելի պայման է առաջադրում։ Ոսկերչի աշակերտը Ֆրանգստանի թագավորի աղջկա խորհրդով, մի նույնքան անիրադրածելի պայմանով պատասխանում է թագավորին, որը հիանալով պատանու խելքով, իր դստերը տալիս է վերջինիս կնության։ Հեքիաթի վերջում, երբ տղան երկու արքայադստրերի հետ էլ ամուսնանում է, պատմում է իր երազը, որը դարձել էր հեքիաթի սյուժետային հանգույցը։ «Ես տեսա, — պատմում է տղան, — Արեգակ մեկ էն կուշտս, Արեգակ մեկ էն կուշտս, պոծառ աստղ վէր իմ սրտին կը խաղեր»։ Որ նշանակում է, թե զույգ արեգակները իր երկու կիսն են, իսկ պայծառ աստղը՝ ամիրայի աղջկանից ծնված որդին։

Այսպիսով հեքիաթի ավարտը հանելուկային իրադրության հանգույցալուծումն է, պայմանավորված հեքիաթի ամբողջ սյուժետային զարգացմամբ։

Հանելուկային իրադրության վրա են կառուցված Ս. Հայկունու տպագրած «Որն է պոռնկորդին» և սրա մի այլ փոփոխակ «Հորորդին որն է» հեքիաթ-հանելուկները⁵։

Մի մարդ ոմնենում է երեք որդի. մեռնելիս ղավակներին հայտնում է, որ նրանցից մեկը ապօրինի է։ Այդ հայտնությունը ղավակների համար դառնում է մի դժվարալուծելի հանելուկ։ Հետագա դեպքերը տանում են դեպի հեքիաթի այդ հանելուկային հանգույցի լուծումը։ Սյուժետային զգույն ծավալումը դարձյալ միջնորդվում է առեղծվածակերպ միջադեպերով։ Եղբայրները նայելով ճանապարհի հետքերին գուշակում են, որ այդտեղից անցել է մի աչքը կույր

² «Հայ ժողովրդական հեքիաթներ», ժողովածու. Տ. Նավասարդյան, 8-րդ դիրք. Թիֆլիս, 1894, էջ 10։

³ «Մանանա», էջ 192։

⁴ «Հայ ժողովրդական հեքիաթներ», 8-րդ դիրք, էջ 17։

⁵ «Մանանա», էջ 199։

⁶ Տե՛ս «Էմինյան աղագորական ժողովածու», հատ. Դ, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 82 և 161։

ուղտ, որի վրա բարձած է եղել մեղր և քացալս, իսկ ուղտի հետ գնալիս է եղել նաև մի խոռված հղի կին: Այս հանելուկային ենթադրությունները պարզելու համար կորած ուղտի տերը, եղբայրներին դատավորի մոտ է տանում, որտեղ նրանք մեկնում են իրենց առեղծվածային հավաստումները: Այնտեղ դատավորի աղջիկը եղբայրներին փորձում է հանելուկանման պատմվածքով և նրանց տված պատասխաններից էլ որոշում ապօրինի զավակին:

Այս ձևով հանելուկային հանգույցը առեղծվածային միջադեպերի շնորհիվ զարգանալով, սյուժետավորվում է և վերջում քայքայում իրեն՝ հանելուկային սկզբնական հարցադրման՝ տմեկնորին անհայտ կողմի բացահայտմամբ:

Հետաքրքիր հեքիաթ-հանելուկներ են «Աղջիկ թագավորի հեքիաթը» և «Սև կան հեքիաթը»⁷:

Երկուսն էլ նույն սյուժեի փոփոխականներն են, ըստ որում երկրորդ հեքիաթի սկզբից միացել է մի այլ սյուժետավոր սկսվածք. որով պատճառաբանվել է հեքիաթի հանգույցը: Երկուսի մեջ էլ առկա է սյուժետային նույն սխեման, ինչ նախորդ հեքիաթ-հանելուկներում: Հանգույցները՝ հանելուկային պայման-հանձնարարություններ են, որ տրվում են հերոսին: Սակայն այստեղ հանելուկային պայմանները հանձնարարում է աղջիկ թագավորը կամ արքայադուստրը երիտասարդ թագավորին կամ թագաժառանգին, երբ վերջինս խնդրում է նրա ձեռքը կամ աղջիկն է մտադիր նրա հետ ամուսնանալու: Հետևաբար հանելուկ հանձնարարելը նախորդում է ամուսնուլթանը և հանելուկը դառնում է նրա նախապայմանը:

Բացի հանելուկային պայմանների կատարմամբ փեսացուին փորձելուց, հայ ժողովրդական հեքիաթներում հանդիպում են այնպիսիները, որոնց մեջ հարսնացուն ամուսնանալուց առաջ փեսացուին, առաջարկում է մի շարք հանելուկներ: Այս տեսակետից ուշագրավ է «Արաուճ և խաղաղ թագավոր» հեքիաթը, որտեղ պարզ ու որոշակի դրսևորվել է գործնական կյանքում հանելուկների կիրառման հնագույն ֆունկցիաներից մեկը: Երիտասարդ արքայազնը պնդում է խնդրելու Արաուճ թագավորի կրտսեր դստեր ձեռքը: Վերջինս արքայազնին առաջարկում է մի շարք հանելուկներ. դրանցից առաջ կրեքենք այն նրմուշները, որոնց նմանակները կան մեր ժողովրդական հանելուկների մեջ:

1. «Տղա, ըն ինչ կենդանի է, էռտում օր կապրի. մէ օր կը մեռնի, մէկէալ օր սաղնայ» (Լուսին):

Հմմտ. լուսնի վերաբերյալ հետևյալ ժողովրդական հանելուկի հետ.

«Տասներ և հինգ տարի թագավոր էլավ, տասներ վեցին հիվանդացավ. երեսուցին մեռավ պրծավ, համա էլ եղ սաղացավ» ՀժԱ, 4⁹:

2. «Էան ինչ է. վերուցի դարկի, մեջ տեղէն քաշեցի. ամեն դի մի մի կալսեցի, չոր դարկի, քուր հանեցի» (Զիու թամբ, փորքաշ, ասպանդակներ և սանձ):

Հմմտ. նույն առարկաների մասին ասվող հետևյալ ժողովրդական հանելուկի հետ.

«Վեր ունամ, վրեդ դնեմ. կողքերիցդ կախ անեմ, պոչիդ տակից սլանդ (կապ) անեմ, չոր կոխեմ թաց հանեմ» ԷԱԺԶ 357¹⁰:

⁷ Տե՛ս «Մարգարիտներ հայ բանահյուսության», Գ զիբր, ԼՋ 18 և 153:

⁸ Տե՛ս «Էմինյան աղագրական ժողովածու», հատ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 238:

⁹ Հայ «ժողովրդական ավանդություններ», ժողովածու Տ. Ն ա վ ա ս ա Ր զ յ ա ն ց, Երևան, 1883:

¹⁰ «Էմինյան աղագրական ժողովածու», հատ. 2, Մոսկվա-Վաղարշապատ, 1906:

3. «Ծաղիկ մի կար, մի սէօն (սյուն) ունէր.

Վրան ալ շատր (վրան) ունէր,

Տակր հազար հատ զուան (փայտե սեպ) ունէր» (Սունկ):

Հմմտ. նույն նշանակությամբ ժողովրդական հանելուկի հետ:

«Մի տուն ունիմ մեկ սյունանի,

Հարյուր հազար տախտակ ունի» էԱԺԱ 158¹¹ և այլն:

Փեսացուին՝ նախքան ամուսնանալը աղջկա կողմից հանելուկներով փորձելու հնամենի սովորության մի այլ արտահայտություն է հեքիաթներում փեսացուի կողմից շխտական արքայազուտեր հնարաղիտությամբ խոսեցնելու տարածված մոտիվը¹²:

Ըստ որում շխտական արքայազուտեր հայրը պայման է դնում, ով իր աղջրկան երեք անգամ խոսեցնի, նրա հետ կամուսնացնի, իսկ ով չկարողանա կգլխատի:

Ճնարագետ տղան (կամ տղամարդու կերպարանքով ծալոված աղջիկը) երեք առակ է պատմում, որոնց վերջնական եզրակացությունները վեր է ածում հանելուկային հարցմունքների: Բազավորի աղջիկը ստիպված պատասխանում է այդ հարցերին, տրով ամուսնության պայմանը կստարված է համարվում:

Բացի հեքիաթի ամբողջական սյուժե լինելուց, հանելուկը հեքիաթներում զրսերովում է ընդարձակ սյուժետավոր միջադեպերի ձևով: Հանելուկային նրման էպիզոդները ըստ էության նույն հեքիաթ-հանելուկներն են, որոնք միացել են այլ հեքիաթային սյուժեների և դարձել ընդարձակ հեքիաթների սյուժետավոր հանելուկային միջադեպեր: Նրանց ներքին ամբողջականությունն ու հեքիաթի մնացած մասերի հետ ունեցած կոմպոզիցիոն թույլ կապը վկայում են այդ ընդարձակ միջադեպերի սկզբնապես անկախ հեքիաթներ կամ առանձին պատումներ լինելու փաստը: Այդ միջադեպերի մեջ սյուժետային կառուցվածքի նույն սկզբունքն է նկատվում, ինչ հեքիաթ-հանելուկներում: Այստեղ նույնպես հանգույցը սկսվում է հանելուկային հարցադրմամբ, որը և պայմանավորում է դեպքերի աստիճանական ծավալումն ու դարդացումը: Այուժեի դարդացումը միջնորդավորվում է առանձին հանելուկային վիճակներով: Սրանք էլ աստիճանաբար, միջադեպի հանելուկային հանգույցը հասցնում են իր վերջնական լուծման:

Հանելուկային ընդարձակ միջադեպեր ունեցող հայ ժողովրդական տպագիր հեքիաթներից են «Բերդակ թաղավոր», «Կարապետ Բեկի հեքիաթը»¹³, «Սինամահավը»¹⁴: Երկրորդ հեքիաթի առաջին ընդարձակ մասը, աննշան փոփոխություններով երևան է գալիս երրորդի մեջ իրիս առանձին հեքիաթ, որ պատմում է կրտսեր թաղավորալնը բուն հեքիաթի զաղախիբր բացահայտելու համար: Այլ կերպ ասած, երկրորդի հանելուկային ընդարձակ միջադեպը երրորդ հեքիաթում ծառայել է իրիս հեքիաթային զաղախի հանգույցի բացահայտման միջոց: Երկրորդ հեքիաթի իմաստուն հերոսը՝ Կարապետը, գաշտում հոր հետ

¹¹ «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ա, Մոսկվա-Սկերսանդրապոլ, 1901:

¹² Նման մոտիվներով հայկական հեքիաթներից են՝ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում տպագրված «Ճամին քաղար և շղթայահառ», «Անխոս աղջիկ» և Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» Ա, դրքի «Ոսկե ձուկ» ստեղծագործությունները:

¹³ «Մարդարիտներ հայ բանահյուսության», Ա, դիրք, էջ 109, 263:

¹⁴ «Էմինյան ազգագրական ժողովածու», Դ դիրք, էջ 132:

վար անելիս հանդիպում է ձիավոր արքայազուտեր և նրա նաժիշտին: Նա հորը հայտնում է, որ նրանցից մեկը արու է մյուսը՝ էգ: Սա դառնում է ամբողջ միջադեպի հանգույցը: Դեպքերը սկսում են հանելուկային այդ հարցադրումից: Թագավորին հավեր են բերում երկու դեղեցիկ ձուկ: Արքայազուստը խնդրում է ձկներն ուղարկել իրեն տեսնելու, պայմանով, որ արու չլինեն: Այդ պայմանի վրա ձկները ծիծաղում են: Առեղծվածային այս երևույթը պարզելու համար թագավորին է ներկայանում Կարապետը և պատրաստակամությամբ հայտնում մեկնելու ձկների ծիծաղի պատճառը: Ես այց միաժամանակ դբուշացնում է, թե առեղծվածը լուծելուց հետո թագավորը կզղջա: Այդ առթիվ Կարապետը երեք տարբեր դրույց է պատմում իրենց արարմունքից զղջացող մարդկանց մասին:

Չնայած նախադրուշացման այդ այլարանական ձևերին, թագավորը հոժարում է լսել ձկների ծիծաղի պատճառը: Կարապետը թագավորին ու թագուհուն տանում է աղջկա առանձնասենյակը և հրամայում մերկացնել աղջկան ու իր նաժիշտին: Պարզվում է, որ արքայազուտեր նաժիշտը ծպտված տղամարդ է: Հանելուկը լուծվում է. թագավորը գլխատել է տալիս աղջկան:

«Բերդակ թագավոր» հեքիաթի առաջին մասը դարձյալ մի ամբողջական պատում է, որ կառուցված է հանելուկային սյուժեի հիման վրա: Զբոսանքի դուրս եկած թագավորային դաշտում հանդիպում է մի աղջկա, որի առաջ գրած է մի սկտտեղ՝ վրան մի խնձոր: Ով նետով հարվածի խնձորին, նա կդառնա աղջկա փեսացուն: Արքայազնը կատարում է պայմանը, աղջիկն ասում է. «Գնա, տղա, ով օր քու կոճակները դուս ածի և մեր ածի, նրան առնեա»:

Աղջկա հանելուկային այս պայմանը դառնում է միջադեպի սյուժետային հանգույցը, որից սկսվում են դեպքերը զարգանալ ու միջնորդավորվել նորանոր մոտիվներով, և ի վերջո այդ աղջիկը Դեստոնում հանդիպում է տղային, նրա արյունոտ շորերը հանում է, լողացնում, ապա հագցնում և կոճկում: Հանելուկային պայմանը կատարված է, թագավորազնը ամուսնանում է աղջկա հետ:

Բացի վերոհիշյալ սյուժեներից ու մոտիվներից, հանելուկային ընդհանուր գծեր և երևույթներ են առկա բոլոր այն հեքիաթներում, որտեղ հերոսին հանձնարարվում է մի դժվար կամ անիրագործելի պայման, խնդիր (հաղարան բլբուլ, անմահական խնձոր, անմահական ջուր բերել, մեկ գիշերվա մեջ զանազան շինվածքներ կառուցել և այլն), որոնք հերոսը իրագործում է մեծ փորձությունների դնով՝ հրաշագործ առարկաների, կենդանիների ու անձնավորությունների օժանդակությամբ:

2.

Հայկական ժողովրդական հանելուկների կապը բանահյուսական շափածո ստեղծագործությունների հետ առավել կոնկրետ է ու անմիջական:

Ժողովրդի ղեղավորության մտորումների հնագույն արտահայտություններից են դյուլանքի բանաձև-աղոթքները: Սրանք՝ խոսքի, բնության ուժերի վրա ունեցած խորհրդավոր դորության նախնական հավատալիքի արգասիք են:

Նախապատմական մարդը, չմթնանալով արտաքին երևույթների պատճառական առնչությունը, չար ու խորհրդավոր հատկություններ էր վերագրում նրանց: Միաժամանակ անկարող լինելով սեփական ուժերով պայքարելու դրանց դեմ, նա իր խոսքին զորավոր կախարդական հատկություններ էր վերադրում և այն որոշակի բանաձևումների ենթարկելով, ուղղում էր ար-

սաքին այդ ուժերի դեմ: Ժողովրդական բանավոր աղոթքները, այս իմաստով, խոր հնություն տւեն: Դյութանքի և հմայանքի չափածո բանավոր աղոթքները իրենց թե ձևով և թե ներքին էությունը աղերսվում են ժողովրդական հանելուկների հետ: Երկուսի էլ էական ընդհանրությունը խորհրդավորությունն է:

Հանելուկի մեջ այն պայմանավորված է առարկայի միտումնավոր այլաբանական կերպավորմամբ, մինչդեռ ժողովրդական աղոթքի մեջ խորհրդավոր է և մասամբ հանելուկային ամբողջ հմայական գործողությունը, որի բանավոր նկարագրությունն է հենց աղոթքը:

Քանի որ վիպական բանահյուսության այդ երկու տեսակների մոտ էլ առկա է միևնույն հատկանիշը՝ խորհրդավորությունը և երկուսն էլ շատ հին ծագում ունեն, բնական է, որ մեկը իր որոշ կողմերով փոխադրեր մյուսին, մեկը վերածվեր մյուսին: Աղոթքներից մի քանիսը իրենց խորհրդավոր ու առեղծվածային բնույթի պատճառով ընդհուպ մոտենում են ժողովրդական հանելուկներին:

Օրինակ.

— Անդիրեկ (անկրակ) խըրավիլ

Անբերան օտիլ.

Սերտըմնուն դեղը հինչ.

Կըժը դլոխ, պըղվըտե ասուղ,

Ըրկաթե քար: ԱՂ 20. 115¹⁵:

Այստեղ առաջին երեք տողերը անանուն առարկայի նկարագրությամբ ու հարցով ամբողջապես հանելուկային են, իսկ չորրորդ տողը դառնում է հանելուկի յուրատեսակ լուծում: Աղոթքի հմայական բանաձևը առեղծվածատիպ է, իսկ առաջարկվող բուժամիջոցը առեղծվածի մի տեսակ բացահայտումն է, թեպետ ինքն իր մեջ դեռ մնում է չպարզարանված:

Իր էությամբ հանելուկային է չար աչքի հետևյալ դյութական բանաձևը.

— Լալա լարթամ

Ճեղն օնե, տիրև չօնե,

Չար մարդին խոսըր չօնե: ԱՂ 20. 114:

Բացի այն, որ բանաձևն ամբողջությամբ խորհրդավոր է, երկրորդ տողն առանձին վերցրած մի հանելուկ է, որ հանդիպում է հայկական հանելուկներում հետևյալ ձևով.

— Ունք ունի, բունք ունի

Ճուղն ունի տերև չունի: (Եղջերուի եղջյուրներ) ԳԻՒՒՆ¹⁶:

Աղոթքների և հանելուկների փոխադարձ ազդեցության արտահայտություններ են այն ստեղծագործությունները, որոնց մեջ ակնհայտ նմանություններ ու նույնություններ են նկատվում:

¹⁵ «Ազգագրական հանդես», 20-րդ դիմի, Թիֆլիս, 1910:

¹⁶ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության նյութերի արխիվ, Տ. Ն ա վ ա ս ր դ յ ա ն ի ֆոնդ:

Օրինակ.

— Ինծի ծառ մը կա, ծառի,
Գլուխս կուլ (լիճ) մը կա,
Կուլի մեջ օձ մը կա,
Օձի գլուխն վարդ մը կա (Ճրագ, ձեթ, բոց)¹⁷:

Այս հանելուկը, որ ունի իր բազմաթիվ փոփոխականները, շատ է առնչվում տարբեր հիվանդությունների վրա զանազան տարբերակումներով ասվող հետեւյալ հմայական աղոթքի հետ.

— Գնացի Մոսեսա սաբը, մե ծով կա,
Ծովի մեջը մե գեղ կա,
Գեղի մեջը մե ծառ կա
Ծառի վրա մե բուն կա,
Բնի մեջը մե ձու կա,
Ձվի մեջը մե օց կա,
Օցը մազ ունի երագի,
Յաճկ ունի ապիկի...¹⁸:

Հանելուկը ճրագի և նրա կրակի վերաբերյալ է ասվում, իսկ աղոթքը՝ աչքի: Երկուսն էլ հավանաբար արդյունք են միեւնույն հավատալիքի:

Եմանատիպ կապի մասին է վկայում նաև հետեւյալ աղոթքը.

— Հա՛ ել, հա՛ ել, լուսնյակ հա՛ ել,
Լուսնակը պակը պոլորե.
Պակ պոլորե պատարագին,
Երբան մտնեն Եկեղեցին
Կըլոխ տընենք Ասպածածին
Տանկով զարկին տուր պացին,
Մտան Ըբես լաղոց կացին
Մեղավորներ նստան լացին,
Արտըսընքով ծիյվեր (ծնկներ) լվացին¹⁹:

Ընդգծված տողերը անշուշտ փոփոխությունների ենթարկված հանդիպում են ժողովրդական հանելուկներում հետեւյալ ձևով.

— Մանտր մանտր եկեղեցի,
Դանկով զարկի դուռը բացի (Չմերուկ) է՛կե՛կ 153:
Մտա ներսը համբուրեցի,
Ելա դուրսը թոփ քցեցի:

Այն հանգամանքը, որ աղոթքներից ու հանելուկներից միմյանց հատված-հիեր են փոխանցվել ու վերածվել մեկը մյուսին, վկայում է բանահյուսական այդ երկու տեսակի համահարադատությունը, որ արդյունք է դարձյալ երկուսի խորհրդավոր առեղծվածայնության:

Իր ձևով ու ծագմամբ այս երկուսին է մոտենում նաև առածը:

¹⁷ «Լուսմա», գրական հանդես, Ե: տարի, 1900, գիրք Ա, էջ 50:

¹⁸ Ա. Երևմյան, Չահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923, էջ 25:

¹⁹ «Աղագարական հանդես», 19-րդ գիրք, Թիֆլիս, 1910, էջ 89:

3.

Առաժի ու հանելուկի կապը առավել ցայտուն է ու արտահայտիչ:

Ամենաընդհանուր նմանությունը, որ առկա է երկուսի մոտ էլ, ոճաբանական կառուցվածքն է: Երկուսն էլ արվեստի համեմատելի ձևեր են և երկուսն էլ դասվում են գիտակցված սիմվոլիկայի բնագավառում: Հանելուկի նման առածը ունի այլաբանական բնույթ. նա ևս բաղկացած է այլաբանական կոնկրետ պատկերից և ներքին, ավելի ընդհանուր իմաստից: Հենց այդ արտաքին դրսևորման ձևի և ներքին իմաստի գոյություն, և գիտակցման պատճառով առածները մոտենում են հանելուկներին: Շատ առածներ ամբողջապես հանելուկային են և հաճախ անհասկանալի: Այդ է պատճառը, որ առածների կողքին բանահավաքները երբեմն դնում են նաև նրանց բացատրությունները: Ուստի առած ուսումնասիրողի առաջին գործը նրա այլաբանական կեղևի ճեղքումն է և բուն իմաստի բացահայտումը: Արտաքին ձևական կառուցվածքով նույնպես հանելուկները խիստ մոտենում են առածներին: Երկուսն էլ բաղկացած են լինում սովորաբար մեկ կամ մի քանի չափածո հանգավոր կամ անհանգ անդամներից և երկուսն էլ բանահայտական փոքր տեսակներից են:

Հիշյալ ներքին և արտաքին նմանությունը առիթ է ծառայել հանելուկներին և առածների փոխադարձ կապի առավել կոնկրետ ու հետաքրքիր դրսևորումների: Այդ փոխադարձ առնչակցությունն ամենացայտուն ձևն այն է, երբ առածը նույնությամբ կամ աննշան ինտոնացիոն փոփոխությամբ վերածվում է հանելուկի:

Այս դեպքում առածը կորցնում է իր ներքին համընդհանուր իմաստը, որի փոխարեն անցնում են մեկ կամ մի քանի կոնկրետ առարկաներ, որոնք իրենց էությունով տարբերվում են առածի արտաքին կերպարից: Այլ կերպ ասած, առածը կորցնում է իր որակական առանձնահատկությունը և փոխարկվում է մի ուրիշ որակի՝ հանելուկի:

Այսպես օրինակ.

Գործիդ նստեմ, միրուքդ փետեմ ՂԱ. 69²⁰

առածը, որի ներքին իմաստը Լրախտամոռության ու անհավատարմության ընդհանրական Լրևույթն է մատնանշում, վեր է ածվել տարբեր առարկաների վերաբերյալ ասվող հանելուկների, ձեռք բերելով իր արտաքին պատկերից տարբերվող նոր կոնկրետ բովանդակություն:

— Գործիդ նստեմ միրուքդ փետեմ (Սանր) ԳԻՍԱ,²¹ նաև (Ծառ) ԳԻՍԱ:

— Ծունկիս նստեցունիմ, մորուքդ քաղիմ (Սանդերք)²² և այլն:

— Սև եզր վեր բնկավ, զանակավորը շատացավ ՂԱ. 17

առածը, որ ասվում է սոցիալական, քաղաքական, բարոյական ու ֆիզիկական առումով ընկած մարդուն շատերի կողմից հարվածվելու ընդհանուր երևույթի մասին, տձական մասնակի փոփոխություններով վերածվել է խաղողի ողկույլի²³, ձմերուկի (ԳԻՍԱ), կերակրով լի պղնձի (ԳԻՍԱ) վերաբերյալ ասվող հանելուկների:

²⁰ Ա. Դանտյանյան, Հայկական առածանի, Երևան, 1951:

²¹ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության նյութերի արխիվ, Գ. Աղադատյանի ֆոնդ:

²² «Հայ ժողովրդական հեքիաթներ», ժող. Տ. Նավասարդյանց, 8-րդ զրբք, Թիֆլիս, 1894, էջ 119:

²³ «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1930, էջ 567:

— Պղինձը վեր ընկավ շրկոտրվեց, ձկնը վեր էլավ ՂԱ 45
առածը, որ ասվում է ոչինչ չարած, բայց մեծ աղմուկ հանած մարդկանց
մասին, մասնակի փոփոխությունների ենթարկվելով, դարձել է կոնկրետ հրա-
յանի վերաբերյալ հանելուկ։

— Տաշտը գետինն ինկավ, ձանը էրկինքը էլավ (Հրացան)²⁴ ձևով։

— Բռնիմ պոչեն, թալիմ քոչեն (Անկյուն) ՂԱ 75
առածը, որ ասվում է ապաշնորհ և անպետք մարդու վերաբերյալ, դարձել է
չամիչ նշանակող հանելուկ։

— Բռնեցին պոչեն,

Թալեցին քոչեն։ (Չամիչ) ԷԱԺԳ 344։

— Էկավ փաշի պես, դեսց բոշի պես ՂԱ 20

առածը մասնակի աճումով դարձել է ձյան վրա ասվող մի պատկերավոր
հանելուկ։

Էկավ աղի պես, նստավ փաշի պես,

Դեսց բոշի պես։ (Ձյուն) (Իմ հավաքածոյից)։

Բերած բոլոր օրինակների մեջ, առածը, զրկվելով իր ընդհանուր բովան-
դակությունից, դարձել է կոնկրետ առարկաների կոնկրետ հատկանիշներ
դրսևորելու այլաբանական պատկեր, որի հիմքը հանելուկային առարկայի և
առածի այլաբանական կերպարի միջև եղած ընդհանուր նմանությունն է։

Ժողովրդական հանելուկների և առած-ասացվածքների փոխադարձ աղեր-
սի դրսևորման մի տերիչ արտահայտություն է այն փաստը, երբ հանելուկը
անուղղակի ձևով, ոչ միշտ նույն արտահայտչամիջոցներով, ակնարկում է
որևէ առած կամ ասացվածք։ Այդ կարգի հանելուկները վերարտադրում են մի-
այն տվյալ առածի կամ ասացվածքի հիմնական գաղափարը, Բերենք միայն
ևրկու օրինակ։

— Քանի տալիս եմ, կշտանում չի²⁵։

Աչքի վերաբերյալ ասվող այս հանելուկը անշուշտ հիմք է ունեցել «Մար-
դուս աչքը անկշտում ա» տարածված ժողովրդական ասացվածքը։

Կամ՝

— Մե տում՝ կա, տում էլ ինե,

Կատղած շներ կապուկ փնե (Հրացան) ԳԻԱՆ

հանելուկը խիստ համահնչուն է

— Մեծ-մեծ տներ, մեջը՝ սոված շներ ՂԱ 6։

Ժողովրդական առածին և այլն։

4.

Բանահյուսական մյուս տեսակը, որի հետ հանելուկը բավականին սերտ
առնչություն տնի, երգն է։

Ժողովրդական երգը նույնպես շատ հին ծագում ունի և բնական է, որ
նրա և հանելուկի միջև եղած շատ ընդհանրություններ արդյունք լինեն արվես-
տի նախնական վիճակի։ Սակայն դրանց հիմնական ապացուցելի մասը ար-

²⁴ «Բյուրակն», շարաթաթերթ, Կ. Պոլիս, 1900, էջ 133։

²⁵ «Մեղու հայաստանի», 1860, № 4։

գասիք է ավելի ուշ ժամանակների, երբ բանահյուսական յուրաքանչյուր տեսակ ապրում էր իր պատմական կյանքով և միևնույն ժողովրդի բերանում փոխազդում ու փոխարկվում մեկը մյուսին:

Ժողովրդական երգը (խաղիկ) սովորաբար բաղկացած է երկու զուգահեռ անդամներից, որոնցից առաջինը բնությունից կամ հասարակական կյանքից վերցրած էպիկական-նկարագրական բնույթ ունի: Այդ արտաքին պատկերը երգիչը զուգադրում է իր քնարական զգացմունքներին, որոնք էլ դառնում են քառյակի երկրորդ զուգահեռ գլխավոր անդամը: Փաստորեն երգիչը մի տեսակ համեմատություն է անցկացնում այդ արտաքին բնական և հոգեբանական կողմերի միջև: Առաջին զուգահեռ անդամը, որ ավելի ընդհանուր բնույթ ունի, դառնում է երգչի կոնկրետ զգացմունքների անուղղակի փոխաբերական արտահայտությունը, ճիշտ այնպես, ինչպես հանելուկների մեջ հանելուկային բանաձևն է այլաբանորեն վերարտադրում իր բուն նշանակության որոշ հատկանիշներ, միայն այն տարբերությամբ, որ հանելուկի երկրորդ անդամը՝ առարկան գիտակցորեն լռության է մատնված և զուշակման կարիք ունի: Ահա երգի ու հանելուկի այս ընդհանուր կառուցվածքային նմանությունն է անշուշտ պատճառը, որ նրանց առնչում է միմյանց հետ: Դեռևս Ստ. Պալասյանն էր նկատել երգերի և հանելուկների այս նմանությունը: «Վիճակախաղերը... գրում է նա,— առհասարակ շորս տողից են բաղկանում... Առաջին երկու տողերը սովորաբար մութ են ու ումանք հանելուկի ձև ունին. հաջորդ տողերը լուծում են առաջարկված հանելուկը»²⁶:

Իհարկե, միայն վիճակի երգերը չեն այդ բնույթի, այլ մեր ժողովրդական խաղիկների ճնշող մեծամասնությունը:

Բացի այս էական կողմից, մի ուրիշ ձևական հանգամանք էլ պետք է նկատի ունենալ:

Երգի առաջին զուգահեռ անդամները, լինելով կյանքից կամ բնությունից վերցրած, մեծ մասամբ պատրաստի ու հանրածանոթ պատկերներ, խիստ շարժական են և հաճախ անցնում են մի երգից մյուսին: Բանի որ դրանք էպիկական բնույթ ունեն և ժողովրդական շափածո բանավոր խոսքի մեջ գործածական, բնական է, որ երգերից անցնեն վիպական բանահյուսության մյուս տեսակներին և ընդհակառակը, եթե իրենց բովանդակությամբ համընկնում են երգչի զգացմունքներին, առած կամ հանելուկ հորինողի խորհրդավոր նպատակադրումներին: Եվ այդ երևույթը ակնհայտորեն երևան է գալիս հայկական հանելուկների ու ժողովրդական խաղիկների առաջին խսկ համեմատությունից:

Հայկական հանելուկների ու երգերի փոխադարձ կապը դրսևորվում է մի քանի ձևերով:

Ամենատարածվածն ու ակնբախն այն է, երբ ժողովրդական խաղիկներից անջատվում են առաջին տողերը, այլաբանական իմաստ են ձևաբերում և անցնում առանձին առարկաների վրա իբրև հանելուկներ: Ըստ որում հիշյալ կարգի փոխանցումները, առածների նման, խարսխվում են հանելուկային առարկայի և երգի տվյալ հատվածի որոշակի նմանությունների վրա:

Որինակ.

²⁶ «Պատմություն հայոց դրականության», աշխատասիրեց Ստեփան Պալասյան, Թիֆլիս, 1863, էջ 221:

— Թուր ու րվանք քամումը

Ջուխտ աղունակ վանումը:

Մենեմ սիրական յարիս

Ինքը քաղքի ճամփումը: Ժև 250²⁷:

Այս երգը եղել է սիրո, մտրադի վերաբերյալ ասվող վիճակի երգ²⁸, որի մի այլ փոփոխակը եղել է նաև հարսանեկան երգ և հավանաբար երգվել է հարսանեկան հանդեսների ժամանակ՝ իրրև փեսայի գովերգ:

Այս հանգամանքն է, անշուշտ, եղել պատճառը, որ խաղի ընդգծված առաջին զուգահեռ անդամը լոռիում վեր է ածվել հարսի ու փեսայի վերաբերյալ հանելուկի:

Թուր ու թվանք թամբումը

Ջուխտ աղունակ վանքումը (Հարս և փեսա)²⁹:

Երգի առաջին երկտողի և հարսի ու փեսայի միջև եղած նմանությունը գիծը հավանաբար այն է, երբ հին սովորությունը հարսանիքը մի դյուղից մյուսը գնալիս փեսան ձի էր նստում՝ զինված, իսկ տեղ հասնելիս եկեղեցում կատարվում էր պսակադրության հանդեսը, որ հանելուկի մեջ դրսևորվել է վանքում գտնվող աղավնիների այլաբանական կերպարով:

Քամին էկավ հով բերեց,

Եզր ծնավ, կով բերեց.

Քո ջահել ջանին դուրբան,

Քեռ էստեղ ո՞վ բերեց: Ժև 567:

Այս խաղի առաջին երկտողը բազմաթիվ տարբերակներով ասվում է իբրև հանելուկ Աղամի և Եվայի վերաբերյալ.

— Էն ի՞նչն ա ինչ.

Քամին էկավ հով բերեց, (Աղամ, Եվա)³⁰:

Եզր ծնեց կով բերեց:

կամ՝

— Քամին էկավ հով բերեց,

Եզր ծնավ կով բերեց,

Մեզի էս աշխարհ ով բերեց: (Աղամ, Եվա) ԷԱԺԶ 352

և այլն:

Երկրորդ օրինակը գրեթե ամբողջական խաղի վերածումն է հանելուկի, միայն առանց քնարական զգացման, որ խաղին է հաղորդում երրորդ տողը.

Խաղի մեջ ընդգծված զուգահեռ առաջին անդամը ծառայել է իբրև փոխարենական արտահայտչական միջոց երգչի զգացմունքները արտահայտելու համար: Այսինքն՝ երբ քամին հով է բերում և մարդ հանգստանում է, այնպես էլ աղջիկն է ուրախանում, որ իր սիրած տղան եկել է: Բայց ինչպես որ եղի կով ծնելն է անրնական ու զարմանալի, այնպես էլ սիրածի հանկարծակի հայտնը:

²⁷ Մ. Արեղյան, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940:

²⁸ Տե՛ս Գ. Տեր - Աղեքսանդրյան, Թիֆլիսցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 61:

²⁹ «Աղագրական հանդես», 11-րդ գիրք, Թիֆլիս, 1904, էջ 101:

³⁰ «Մեղու հայաստանի», 1884, № 73:

Սույն խաղը տրոշ փոփոխություններով ու եռատող դարձած ասվում է ձեռնըմացի (երեսին քնջութ քսած հաց) վերաբերյալ.

— էտ ի՞նչի.

Սարեն էկամ իյուշիկ-իյուշիկ,

Ոտս մտավ ալամ փյուշիկ,

Հավար նանա (մայր) մէ ճայ (բուռ) նյուշիկ³⁴,

Բացի քառյակներից, երբեմն հաներուկներ են դառնում երկտող խաղիկները և ժողովրդական երգերի կրկնակները, դարձյալ համապատասխան փոփոխությունների ենթարկվելուց հետո:

Օրինակ.

— Սարեն ձորեն ձուն կըգար,

Ծաղկավորը տուն կը գար: ԺԽ 16:

Այս երկտող խաղիկը փիչ ձևափոխված, մի քանի տարբերակներով հանդես է գալիս իբրև թմբուկի կամ զուռնայի մասին ասվող հանելուկ:

— Սարեն ձորեն ձին գուգա

Զին անոթի տուն գուգա: (Թմբուկ) ԷԱԺԶ 357:

Երգի և հանելուկի տողերը ըստ էության նույնն են, փոփոխվել են միայն գործողություն կատարող սուբյեկտները:

Նույն կերպ հաներուկների են փոխարկվում երգերի կրկնակները կամ ընդհակառակը:

Օրինակ.

— Զխկամ-չխկամ, չխկամ-չխկամ

Կերթամ, կուգամ, կերթամ, կուգամ

Թազզա հարսին բարև կուտամ³⁵:

«Թազզա հարսի», «ազափ աղջկա», պառավի, խանութի, աղի անոններով ասվող խնոցի հարելու աշխատանքային երգի այս կրկնակը դարձել է խնոցու վերաբերյալ հանելուկ՝ հետևյալ ձևով.

— էն ինչ է՝ կերթա կիգա

Քո մոր փորուն բարև կիտա³⁶:

Կամ՝

— Դու շորորա, դուն օրօրա, Շողեր ջան,

Ամպի տակին ձոն կերևա, Շողեր ջան³⁷:

Ժողովրդական երգի այս կրկնակը փոփոխված ձևով հանդես է գալիս որպես ալյուրի և ալյուրմաղի վերաբերյալ հանելուկ.

— Ամպն օրորա-օրորա,

Ամպի տակը ձյուն տորորա: ԷԱԺԱ 156:

և այլն:

³⁴ «Փորձ», միամսյա հանդես, Տփլիս, 1879:

³⁵ Ա. Ղա ն ա լ ա ն յ ա ն, Հայ շինականի աշխատանքի երգերը, Երևան, 1937, էջ 193:

³⁶ «Ազգադրական հանդես», Զ գ ի ռ ք, Թիֆլիս, 1900, էջ 102:

³⁷ Կ ո մ ի տ ա ս, Մ. Արեղյան, Հազար ու մի խաղ, 1 հիսնյակ, Վաղարշապատ, 1904, էջ 45:

Այսպիսով հայ ժողովրդական հեքիաթների, աղոթքների, առած-ասացվածքների ու երգերի հետ հանելուկների ունեցած փոխադարձ կապն ու աղերսը քննելիս պարզվում է, որ եթե հեքիաթների հետ հանելուկների տոնչակցությունը հիմնականում դրսևորվում է հեքիաթային սյուժեների կոմպոզիցիոն մասերի հանելուկային հարաբերությունների ձևով, ապա ժողովրդական աղոթքների, առած-ասացվածքների և երգերի մեջ այն, բացի ժանրային ներքին որոշ նմանություններից, հանդես է գալիս արտաքին փոխադրեցությունների տեսքով: Այդ էլ հիմք է տալիս հաստատելու, որ հանելուկների այլաբանական կերպարների ձևավորման համար արտաքին աշխարհի առարկաներից ու երևույթներից վերցրած հասկանիչներից բացի, նպատակահարմարատաղձ են ծառայել բանահյուսական մյուս տեսակներից վերցրած ամբողջական պատկերներ, համեմատություններ, մետաֆորներ և արտահայտչական այլևայլ միջոցներ: